ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29.04.2024թ.

«Մ. Մաշտոցի անվան համալսարան» ՍՊԸ-ն ի դեմս ռեկտոր՝ Հ. Սարգսյանի մի կողմից և «ԻՆՏՕՖՖ» կրթամշակութային հասարակական կազմակերպություն ի դեմս տնօրեն՝ Եղիշե Դաշտոյանի, մյուս կողմից, (միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին համագործակցության մասին սույն Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն Հուշագրի առարկան Կողմերի միջև կրթական միջավայրի զարգացման, ուսումնական գործընթացներում, արտերկրի բուհական և այլ կրթական կառույցների հետ փորձի փոխանակման, կրթական այլ ուղղություններում, ինչպես նաև միջմշակութային շփման կազմակերպման ոլորտում համագործակցությունն է:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կողմերը համագործակցում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Մ. Մաշտոցի անվան համալսարանի և համալսարանին կից բազային քոլեջի, պրոֆեսորադասախոսական, ուսոմնաօժանդակ և վարչական կազմի ներկայացուցիչների ծանոթացում արտերկրների բուհերի և այլ կրթական կառույցների կրթական միջավայրերին, ծրագրերին, ուսումնական գործընթացի կազմակերպման և դասավանդման մեթոդիկայի, ինչպես նաև բուհական կյանքի կազմակերպման այլ առանձնահատկություններին, ինչպես նաև արտերկրի համանման ներկայացուցիչների ծանոթացում Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես Մ. Մաշտոցի անվան համալսարանի և համալսարանին կից բազային քոլեջի, առկա նշյալ առանձնահատկություններին՝ փոխայցելությունների կազմակերպման միջոցով.

- Փոխայցելությունների կազմակերպման միջոցով Մ. Մաշտոցի անվան համալսարանի և համալսարանին կից բազային քոլեջի, ուսանողների, պրոֆեսորադասախոսական, ուսոմնաօժանդակ և վարչական կազմի ներկայացուցիչների ծանոթացում արտերկրների պատմամշակութային ժառանգությանը, հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ առկա են ճանաչված բուհեր, այլ կրթական կառույցներ, ինչպես նաև արտերկրի համանման ներկայացուցիչների ծանոթացում Հայաստանի Հանրապետության պատմամշակութային ժառանգությանը.

- Երկկողմ և բազմակողմ սեմինարների, խորհրդակցությունների, կլոր-սեղան քննարկումների, վերապատրաստումների, գիտաժողովների և այլ կրթական ու ճանաչողական բնույթի միջոցառումների, ինչպես նաև միջբուհական մշակութային միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2.2.Վերը թվարկված ուղղությունների բովանդակությանը համահունչ այլ միջոցառումների կազմակերպում և իրականացում.

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Սույն հուշագիրը Կողմերի համար չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ:

3.2. Սույն հուշագրի շրջանակներում կազմակերպվող և իրականացվող յուրաքանչյուր միջոցառման անհրաժեշտ ֆինանսական ծախսերի շուրջ Կողմերը ձեռք են բերում առանձին պայմանավորվածություն, որը ձևակերպվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանմված կարգով:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2. Կողմերի միջև վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3. Սույն Հուշագիրը կարող է չեղարկվել կողմերի համաձայնությամբ: Կողմերից մեկի նախաձեռնությամբ Հուշագիրը չեղարկվում է նախապես մյուս կողմին 3 (երեք) ամիս առաջ տեղյակ պահելուց հետո:

4.4. Սույն Հուշագրի դրույթների չկատարման կամ ոչ բարեխիղճ կատարման դեպքում՝ դրա գործողությունը չի դադարում, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

4.5. Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Մ. Մաշտոցի անվան համալսարան
ք. Երևան, Հերացի 2/1
Ռեկտոր՝ Հովհաննես Սարգսյան

ստորագրություն
Կ.Տ.

«ԻՆՏՕՖՖ» կրթամշակութային հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Մ. Չայլախյան 41/1

Հեռ.՝ (+374) 93 145519
Տնօրեն՝ Եղիշե Դաշտոյան

ստորագրություն
Կ.Տ.